ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1425

04.07.2014թվ.

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ»
ՄՏԻՑ № 2847
08 07 2014թ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՑ № 5386
08 07 2014թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի աշխատանքները ավելի արդյունավետ կազմակերպելու համար, խնդրում ենք լրացում կատարել ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի ներքին կանոնակարգում, որը հաստատվել է 14.01.2005թ-ին ՀՀ ոստիկանության պետի թիվ 1-Ն հրամանով:

Մասնավորապես՝ կարգի 4-րդ կետում ասվում է «Խումբը բաղկացած է ոչ պակաս քան 7, և ոչ ավել, քան 21 հոգուց: Ընդ որում, յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն խմբում կարող է ունենալ մեկ ներկայացուցիչ»:

Առաջարկում ենք «մեկ» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությունը «... անդամ և մեկ փորձագետ: Փորձագետը կարող է այցելել ՁՊՎ միայն խմբի անդամների ուղեկցությամբ»:

Նշենք, որ այս փոփոխությունը կնպաստի Դիտորդական խմբի աշխատանքներին: Համագործակցող հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը Դիտորդական խմբի աշխատանքներում և ՀՀ ոստիկանության պատրաստակամությունը կնպաստի Դիտորդական խմբի կարողությունների բարձրացմանը և ՁՊՎ-ներում մարդու իրավունքների լիարժեք ապահովմանը:

Դիտորդական խումբը գտնում է, որ տվյալ հարցի քննարկման ժամանակ անպայման պետք է մասնակից դարձնել նաև Դիտորդական խմբի անդամներին:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org
E-mail: info@policemonitoring.org

Միաժամանակ Դիտորդական խումբը կարծում է, որ առաջարկված այս տարբերակը վերջնականապես ոստիկանության կողմից ընդունելի կլինի:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-_____ <<____>> _____ 2014թ.

2/2-1-1769
21.07.14թ

Ձեր 04.07.2014թ. թիվ 2621/1425 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգ>>-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ձեր առաջարկությունները ՀՀ ոստիկանության շտաբում քննարկվել են դեռևս 2013թ. ապրիլ-մայիս ամիսներին դիտորդների խմբի, քննչական գլխավոր և իրավաբանական վարչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի կապակցությամբ 18.05.2013թ. թիվ 2/2-1-1468 գրությամբ Ձեզ տրվել է հիմնավոր և սպառիչ մեկնաբանություն:

Այսպես, դիտորդների խմբի կազմում փորձագետի ընդգրկման վերաբերյալ Ձեր կողմից առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ այն պատճառաբանությամբ, որ ներկայումս դիտորդների խումբը համալրված է 9 անդամներով, իսկ վերոհիշյալ կարգի 4-րդ կետը հնարավորություն է տալիս խումբը համալրել մինչև 21 անձանցով, իսկ նույն կարգի 7-րդ կետը նախապատվություն է տալիս իրավաբանի, հոգեբանի, մանկավարժի և բժշկի մասնագիտություն ունեցող անձանց, ուստի, եթե խումբը ձևավորվի կարգի նշված կետերին համապատասխան, ապա լրացուցիչ փորձագետի ներգրավման անհրաժեշտություն չի առաջանա:

ՀՀ ոստիկանության շտաբ